



**Կարգապահական գործ թիվ ԿԳ-15059**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի  
2015 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 288-րդ ԿԳ նիստի

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ ԹԻՎ ԿԳ/171-Ա**

**ՓԱՍՏԱԲԱՆ ՔՐԻՍՏԻՆԵ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ  
ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹԱՐԿԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի (**այսուհետ նաև՝ Պալատ**) խորհուրդը (**այսուհետ նաև՝ Խորհուրդ**), կազմով՝ նիստը նախագահող Ալեքսանդր Սիրունյանի, մասնակցությամբ Խորհրդի անդամներ՝ Կարապետ Աղաջանյանի, Մելանյա Առուստամյանի, Սիմոն Բաբայանի, Տիգրան Խուրշուդյանի, Նելլի Հարությունյանի, Կարեն Մեծլումյանի, Լուսինե Սահակյանի, Լիպարիտ Սիմոնյանի,

քարտուղարությամբ՝ Նոնա Համբարձումյանի,

քննության առնելով պատասխանող՝ փաստաբան **Քրիստինե Ղազարյանին (արտոնագիր թիվ 1051)** կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ հարցը,

**Պ Ա Ր Զ Ե Ց՝**

**1. Կարգապահական վարույթ հարուցելու առիթը և հիմքը.**

«Հ փաստաբանների պալատի գլխավոր հաշվապահի **2015 թվականի հունիսի 1-ի** տեղեկանքի համաձայն անդամավճարի գծով պատասխանողի պարտքը կազմել է **78.000** Հայաստանի Հանրապետության դրամ:

**2. Կարգապահական վարույթ հարուցելու մասին որոշումը**

Պատասխանողի կողմից սահմանված անդամավճարը չմուծելու **2015 թվականի հունիսի 1-ին** վերջինիս նկատմամբ «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 19 հոդվածի առաջին մասի 5-րդ կետի «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի հատկանիշներով հարուցվել է կարգապահական վարույթ և կարգապահական գործը հանձնվել է Խորհուրդ:

**3. Պատասխանողի բացատրությունները**

Պատասխանողը նիստին չի ներկայացել և բացատրություն չի տվել:

#### **4. Գործի հանգամանքները՝ առկա ապացույցների վկայակոչմամբ**

Խորհուրդը, ուսումնասիրելով գործում առկա գրավոր փաստաթղթերը, հաստատված է համարում այն, որ **2015 թվականի հունիսի 1-ի** դրությամբ անդամավճարի գծով Պատասխանողի պարտքը կազմել է **78.000** Հայաստանի Հանրապետության դրամ, որը, չի վճարվել (հիմք՝ ՀՀ փաստաբանների պալատի **2015 թվականի նոյեմբերի 30-ի տեղեկանքը**)

#### **5. Պատասխանողի անձը բնութագրող հանգամանքները**

Պատասխանողի անձը դրական կամ բացասական բնութագրող հանգամանքներ Խորհուրդը չի արձանագրել:

#### **6. Պալատի խորհրդի պատճառաբանված եզրակացությունը և որոշումը**

Վերոգրյալի հաշվառմամբ, Խորհուրդը գտնում է, որ Պատասխանողը ենթակա է կարգապահական պատասխանատվության հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի առաջին մասի 3-րդ պարբերության և 19-րդ հոդվածի առաջին մասի 5-րդ կետի, ինչպես նաև «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի համաձայն փաստաբանը պարտավոր է մուծել անդամավճարներ, որոնք, ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի 26.12.2013թ.-ին թիվ 33/6-Լ որոշմամբ ընդունված «Անդամավճարների, մուտքի և այլ վճարների վճարումների վերաբերյալ» կարգի 7-րդ կետի համաձայն կատարվում են հաշվետու ամսվան հաջորդող ամսվա մինչև տասնհինգը:

Նույն Կարգի 21-րդ կետի համաձայն փաստաբանի վերոհիշյալ պարտականությունը չկատարելն առաջացնում կարգապահական պատասխանատվություն:

Սույն կարգապահական գործով Խորհուրդը հաստատված է համարում, որ Պատասխանողը չի վճարել սահմանված անդամավճարը:

Պատասխանողի անձը դրական կամ բացասական բնութագրող փաստեր գործով ձեռք չեն բերվել:

Նկատի և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի հինգերորդ մասի 14-րդ կետով, 39-րդ հոդվածի առաջին մասով, 39.7. հոդվածի հինգերորդ մասի 1-ին կետով, 39.9. հոդվածի առաջին մասի 4-րդ կետով, «Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի կանոնադրության» 16.26-րդ կետով, «Փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի իրականացման» կարգի 30-րդ հոդվածի հինգերորդ մասի 1-ին կետով, Խորհուրդը

**Ո Ր Ո Շ Ե Ց՝**

1. Փաստաբան Քրիստինե Ղազարյանին (արտոնագիր թիվ 1051) մեղավոր ճանաչել «Փաստաբանության մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի և «Փաստաբանի վարքագծի կանոնագրքի» 2.9.1. կետի պահանջների խախտման մեջ և նրա նկատմամբ կիրառել նկատողություն կարգապահական տույժը:
2. Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուղարկել փաստաբան Քրիստինե Ղազարյանին:

**Ծանոթություն.** Սույն որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ այն ստանալու օրվանից մեկամսյա ժամկետում և օրինական ուժի մեջ է մտնում սույն կետով նախատեսված բողոքարկման ժամկետն անցնելուց հետո:

ՀՀ փաստաբանների պալատի  
խորհրդի նիստը նախագահող

Ալեքսանդր Սիրունյան